«ԿԱՆԱՉ» ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ՀՏԴ 574

Թաթոսյան Քրիստինե
ՀՊՏՀ ասպիրանտ[*],
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն-փորձագետ,
Երևանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս
Երևան, Հայաստանի Հանրապետություն
kristine.tatosyan@gmail.com

Բադադյան Գագիկ
ՀՊՏՀ ասպիրանտ, ասիստենտ,
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության փորձագետ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
gagikbadadyan@gmail.com

Շահինյան Միեր
ՀՊՏՀ ասպիրանտ,
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության քաղաքականության վարչության արդյունաբերության զարգացման բաժնի գլխավոր մասնագետ-բաժնի պետի պաշտոնակատար
Երևան, Հայաստանի Հանրապետություն
mher.s.shahinyan@gmail.com

«Կանաչ» տնտեսության գործունեությունը միտված է տնտեսություններում ածխածնի արտանետումների և աղտոտման նվազեցմանը, էներգիայի և ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, կենսաբազմազանության և էկոհամակարգի կորստի կանխմանը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է «կանաչ» տնտեսության պլանավորման գործընթացում քաղաքների դերի կարևորությամբ, և համաձայն կանխատեսումների՝ արդեն 2050 թվականին աշխարհի բնակչության 70%-ն ապրելու է քաղաքային բնակավայրերում[1]: Բնական է, որ նման կանխատեսման պարագայում օրակարգի առաջնային խնդիրը դառնում է քաղաքային տնտեսությունների հայեցակարգային փոփոխությունների փաթեթի տրամաբանական ուղղորդումը դեպի «կանաչ» քաղաքականության ներդրում, ապա՝ գործնական տիրույթում այն արդյունավետ իրականացնելուն միտված քայլերի հստակ նախանշում ու իրականացում:

---

[*]Հոդվածը ներկայացվել է 8.11.2022:
Տպագրության է երաշխավորել Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, տ.գ.թ. Համազասպ Գալստյանը՝ 15.11.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 24.11.2022:

[1]Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ, «Քաղաքային զարգացում», թարմացված 20 ապրիլ, 2020, https://www.worldbank.org/en/topic/urbandevelopment/overview , 24.09.2022

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել «կանաչ» տնտեսության և «կանաչ» աճի հասկացությունների էությունը, ցույց տալ դրանց կարևորությունը բնապահպանական և տնտեսական խնդիրների լուծման համատեքստում՝ ընդգծելով նաև «կանաչ» տնտեսության բնութագրիչների և կայուն զարգացման նպատակների փոխազդեցության կարևորությունը:

Հետազոտության խնդիրներն են՝ սահմանել «կանաչ» տնտեսության և «կանաչ» աճի հասկացությունները, տալ դրանց հիմնական բնութագրիչները, ուսումնասիրել «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի» հիմնական ուղղությունները միջազգային փորձի շրջանակներում և Հայաստանում, բացահայտել «կանաչ» տնտեսության բնութագրիչների և կայուն զարգացման նպատակների միջև առկա կապերը՝ տալով դրանց որակական գնահատականներ, ընդգծել դրանց արդյունավետ փոխազդեցության կարևորությունը բնապահպանական և տնտեսական խնդիրների երկարաժամկետ լուծման համատեքստում:

Հոդվածում օգտագործվել են համադրության, ինդուկցիայի, այլ հավասար պայմանների, պատմական և տրամաբանական մեթոդները:

Ըստ հետազոտության գիտական նորույթի՝ «կանաչ» տնտեսության սկզբունքներից բխող բնութագրիչներն ուղղակիորեն փոխկապակցվում են կայուն զարգացման նպատակների հետ, ինչն ուրվագծում է երկարաժամկետ տնտեսության պլանավորման առանձնահատուկ մեխանիզմ: Արդյունքում՝ մատրիցայի համադրման արդյունքները թույլ են տալիս առավել ցայտուն պատկերացնել դրանց փոխգործունեության կարևությունը տնտեսության «կանաչ» պլանավորման և «կանաչ» ընթացակարգերի մշակման և ներդրման գործընթացներում՝ կիրառելով դրանք ոլորտային ռազմավարությունների մշակման գործընթացներում:

Բանալի բառեր՝ *«կանաչ» տնտեսություն, կայուն զարգացում, մատրիցային համադրում, միջազգային փորձ:*

Ներածություն

Տարեցտարի աշխարհը փոխակերպվում է տեխնոլոգիայի՝ կլիմայի, քաղաքականության և տնտեսության էվոլյուցիային զուգահեռ, և նման պայմաններում խիստ կարևոր է դառնում դրականորեն հավասարակշռել բնապահպանական և սոցիալական նպատակները՝ բնության պահպանության, բնակչության բարեկեցության և բիզնեսի զարգացման տեսանկյուններից:

Թեմայի ընտրության արդիականությունը պայմանավորված է աշխարհում «կանաչ» տնտեսությունների ներդրման, «կանաչ» աճի խթանման, դրանց՝ կայուն զարգացման նպատակների հետ ներդաշնակեցման կարևորությամբ, ինչպես նաև՝ աշխարհում աճող ուրբանիզացիայի պայմաններում առաջ եկող բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանն ուղղված «կանաչ» ընթացակարգերի մշակման և կիրառման անհրաժեշտությամբ:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանն արտասահմանյան գիտական շրջանակներում բավականին բարձր է, որոնք հիմնականում կենտրոնանում են «կանաչ» տնտեսության տարբեր ոլորտների քաղաքականությունների ներդրման արդյունավետության, «կանաչ» տնտեսության առաջընթացի, դրա՝ ՀՆԱ-ի, բնակչության թվաքանակի վրա ունեցած ազդեցության և մի շարք այլ ցուցանիշների վրա:

Հոդվածի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել մի շարք արտասահմանյան գրականության աղբյուրներ, ինչպես նաև տեղական ծրագրային հաշվետվություններ:

Գրականության աղբյուր է հանդիսացել նաև «Կանաչ տնտեսության նախագիծ» հոդվածը, որում կարևորվում են կայուն զարգացման հայեցակարգից բխող և «կանաչ» կառավարմանը նպաստող ուղիները[1], ինչպես նաև՝ «Համաշխարհային նոր կանաչ գործարք» հոդվածը, որում հեղինակը ընդգծում է բնապահպանական գործիքակազմերի ներդրման անհրաժեշտությունը համաշխարհային տնտեսության կարգավորման և հավասարակշռման գործընթացում:

*Հոդվածի վերլուծության մեջ օգտագործվել է նաև Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) կողմից հրապարակված «Կանաչ տնտեսության ուղեցույց»-ը: Հետազոտության մեջ ներկայացված կայուն զարգացման և «կանաչ» տնտեսության համադրելիության մատրիցայի կառուցման համար օգտագործվել են նաև «-**Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի շրջանակներում իրականացված** կայուն **զարգացման և աղքատության վերացման ուղիները» թեմայով ուսումնասիրության արդյունքները:***

Վերլուծության իրականացման համար հիմք են հանդիսացել նաև շարք Թբիլիսիի, Սոֆիայի, Քիշնևի «Կանաչ քաղաք գործողությունների» ծրագրային փաստաթղթերը: Տեղական փորձի համադրման նպատակադրմամբ՝ ուսումնասիրվել է նաև Երևան քաղաքի «Կանաչ քաղաք գործողությունների» շրջանակում պլանավորված գործողությունները՝ պարզելու «կանաչ» տնտեսության բնագավառում Երևան քաղաքի ռազմավարական մոտեցումները և իրականացվող կարճաժամկետ գործողությունները:

Հոդվածում կիրառվել են համադրության, ինդուկցիայի, այլ հավասար պայմանների, պատմական և տրամաբանական մեթոդները: Կիրառված հիմնական մեթոդների արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա կիրառվել են նաև մատրիցային համադրումներ՝ ըստ փորձագիտական որակական գնահատումների:

Բովանդակություն

«Կանաչ» տնտեսության վերաբերյալ մի շարք սահմանումներ կան, որոնցում այն սահմանվում է որպես տոկուն տնտեսություն, որը բոլորի համար ապահովում է կյանքի ավելի լավ որակ մոլորակի էկոլոգիական սահմանափակումների միջակայքում.[2]

Այս մոտեցումներում՝ «կանաչ» տնտեսությունը վերափոխման և դինամիկ առաջընթացի գործընթաց է, և այն չի սահմանափակվում միայն պետության մակարդակով:

Դեռևս 1989 թվականից բնապահպանության ոլորտի տնտեսագետները նկատել էին տնտեսության կառավարման գործընթացում «կանաչ» տնտեսության ներդրման կարևորությունը և իրենց առաջին զեկույցում ընդգծել կայուն զարգացման նոր հայե-

---

[1]"Blueprint for A Green Economy", Pearce, D.; Markandya, A.; Barbier, E. Routledge: London, UK, 1989, https://www.taylorfrancis.com/books/mono/10.4324/9781315070223/blueprint-1-edward-barbier-david-pearce-anil-markandya, 02.10.2022

[2]"A Guidebook for the Green Economy", Allen, C.; Clouth, S. , UN Division for Sustainable Development (UNDESA): New York, NY, USA, 2012, 02.10.2022.

ցակարգի սահմանման անհրաժեշտությունը, որի կատարումը կարող էր մեծ ազդեցություն ունենալ երկարաժամկետ տնտեսական զարգացման վրա:

Հետագայում այս խնդրի վերաբերյալ իրենց տեսակետներն առաջ քաշեցին այլ հեղինակներ ևս (1991 և 1994 թվականներին), ովքեր, ի տարբերություն առաջին հեղինակի, ով առավելապես կենտրոնանում էր ազգային մակարդակում հայեցակարգային լուծումների վրա, առաջարկում էին խնդիրը դիտարկել համաշխարհային մակարդակով լուծումներ տալու համատեքստում:

«Կանաչ» տնտեսությունը մարդկանց և բնության վրա կենտրոնացված մոդել է, որն ի զորու է պահպանել բնության երկարակեցությունը՝ լինելով հնարավորինս մարդակենտրոն, «արդար», ապահովելով բարեկեցություն (ավելի լավ առողջապահություն, որակյալ կրթություն, անվտանգ աշխատանք, սոցիալական հավասարություն), խթանելով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազմանը միտված գործընթացի առաջընթացին՝ զուգահեռաբար զսպելով նաև էկոլոգիական ռիսկերը:

Աղյուսակ 1. *«Կանաչ» տնտեսության և «կանաչ» աճի վերաբերյալ սահմանումները՝ ըստ միջազգային մի շարք կառույցների:*[1][2][3]

Կազմակերպություն	Սահմանում
«Կանաչ» տնտեսություն	
United Nations Environment Programme (2011)	«Կանաչ» տնտեսությունը հանգեցնում է մարդկանց բարեկեցության և սոցիալական հավասարության բարելավմանը՝ միաժամանակ նվազեցնելով բնապահպանական ռիսկերն ու էկոլոգիական սակավությունները:
United Nations Conference on Trade and Development, (2011)	«Կանաչ» տնտեսությունը կայուն զարգացման նպատակներից բխող բաղադրիչ է: Այն սահմանվում է որպես տնտեսություն, որը հանգեցնում է մարդկանց բարեկեցության բարելավմանը և անհավասարությունների նվազեցմանը, միևնույն ժամանակ նաև՝ ապագա սերունդներին չփոխանցելով էական բնապահպանական ռիսկեր և էկոլոգիական սակավության խնդիրներ:
International Chamber of Commerce, Green Economy Task Force	«Կանաչ» տնտեսությունում տնտեսական աճը և շրջակա միջավայրի կայունությունը փոխադարձաբար համագործակցում են՝ միաժամանակ աջակցելով տնտեսական առաջընթացին և սոցիալական զարգացմանը:

[1]"Towards A Green Economy: Pathways to Sustainable Development and Poverty Eradication—A Synthesis for Policy Makers", UNEP Division of Communications and Public Information: Nairobi, Kenya, 2011, 15.10.2022

[2]"Environmental Indicator Report 2012: Ecosystem Resilience and Resource Efficiency in A Green Economy in Europe", EEA. Publications Office of the European Union: Luxembourg, 2012, 15.10.2022

[3]"Annual Report 2011: United Nations Environmental Programme", RIO+ 2012; UNEP Division of Communications and Public Information: Nairobi, Kenya, 2011,15.10.2022

EEA (2013)	«Կանաչ» տնտեսությունում բնապահպանական, տնտեսական և սոցիալական քաղաքականությունները և նորարարությունները հասարակությանը հնարավորություն են տալիս արդյունավետորեն օգտագործել ռեսուրսները՝ բարձրացնելով մարդկանց բարեկեցությունը՝ միաժամանակ պահպանելով բնական համակարգերը:
«Կանաչ» աճ	
OECD (2011)	«Կանաչ» աճը վերաբերում է տնտեսական աճին և զարգացմանը խթանելուն՝ միաժամանակ ապահովելով, որ բնական ակտիվները շարունակեն տրամադրել ռեսուրսներ և բնապահպանական ծառայություններ, որոնց վրա հիմնված է մարդկանց բարեկեցությունը:
World Bank (2012)	Աճ, որն արդյունավետ է բնական ռեսուրսների օգտագործման առումով և նվազագույնի է հասցնում աղտոտումը և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Այն հաշվի է առնում բնական վտանգները և բնապահպանական ռեսուրսների կառավարման և բնական կապիտալի դերը ֆիզիկական աղետների կանխարգելման գործում:
United Nations Economic and Social Commission for Asia and the Pacific (2012)	«Կանաչ» աճը տնտեսական աճի պահպանման և աշխատատեղերի ստեղծման ռազմավարություն է, որը ռեսուրսների վատթարացման և կլիմայական ճգնաժամի պայմաններում նպատակադրված է աղքատության նվազեցմանը:

Համաշխարհային «կանաչ» տնտեսությունը չի կարող ուղղված լինել միայն «կանաչ» ընթացակարգերի միջոցով ՀՆԱ-ի ավելացմանը, այն պետք է հնարավորություն ընձեռի իրականացնել անհրաժեշտ կառուցվածքային փոփոխություններ օգտագործվող ռեսուրսների կառուցվածքի, արտադրության եղանակների, սպառման մակարդակի և կառուցվածքի, արտանետումների և կորուստների նվազեցմանը, ինչպես նաև՝ կլիմայի փոփոխությունը կանխելուն միտված գործողությունների համատեքստում:[1]

«Կանաչ» տնտեսության գործունեությունում էական նշանակություն ունի իրատեսական, իրագործելի և արդյունավետ քաղաքականության մշակումն ու ներդրումը: Այս առումով քաղաքականության զարգացումն էապես աջակցում է «կանաչ» տնտեսության ինտեգրմանը տարածաշրջանային և ազգային մակարդակներում համապատասխան ոլորտների քաղաքականությունների և ռազմավարությունների մշակման միջոցով, որից բխում է նաև համապատասխան գործիքակազմերի մշակման անհրաժեշտությունը՝ ներառյալ բնապահպանական ռազմավարության իրագործելիության գնահատումները, կլիմայական և բնապահպանական կանխատեսումները, սոցիալական ազդեցության գնահատումը, ինչպես նաև՝ բնապահպանական, սոցիալական և «կանաչ» գնումների ստանդարտների մշակումը: Կարողությունների զարգացման տե-

[1]"From a green growth to sound policies: An overview. Energy Econ", Schmalensee R., 2012, https://www.sciencedirect.com/science/article/pii/S0140988312002113?via%3Dihub , 25.10.2022

սանկյունից առավելապես կարևորվում է դրանց զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունների իրականացումը, որոնք թույլ են տալիս հաղթահարել «կանաչ» տնտեսության բնագավառում գիտելիքների ձեռքբերման խոչընդոտները և ուղենշում քաղաքականության մշակման առաջնահերթությունները: Կարևորվում է նաև երկարաժամկետ ինստիտուցիոնալ գիտելիքների և հմտությունների ինտեգրումը՝ քաղաքականության վերաբերյալ երկխոսությունների և դասընթացների միջոցով, նպատակ ունենալով խթանել «կանաչ» տնտեսության քաղաքականության մշակումը, իրականացումը և դրա՝ առկա մարտահրավերներին համապատասխան գործունեության ապահովումը:[1]

Վերոնշյալի կարևորության ընդգծմամբ՝ աշխարհի մի շարք երկրներ որդեգրել են «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրի» ռազմավարական հիմնական սկզբունքները և «կանաչ» քաղաք ունենալու նպատակադրմանը հասել այդ գործողությունների շրջանակում: Ինչպես օրինակ՝ Թբիլիսին, որի՝ 2017 թվականին ընդունած «Կանաչ քաղաք գործողությունների ծրագրով» սահմանվում է յուրահատուկ մշտադիտարկման համակարգ տրանսպորտի, արդյունաբերության, էներգիայի, ջրօգտագործման, կոշտ թափոնների կառավարման և մի շարք այլ՝ քաղաքային «կանաչ» աճին նպաստող ոլորտների նկատմամբ:[2]

Նման ծրագրի ներդրման արդյունքում ևս որոշակի նպատակներ են սահմանվել նաև Քիշնև քաղաքում, որի շրջանակներում «կանաչ» քաղաք կառուցելուն ուղղված քայլերը միտված են Քիշնևի քաղաքապետարանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ու ընդլայնմանը, քաղաքային ավտոբուսների պարկի թարմացմանը, քաղաքում տարեկան մեկ օր առանց ավտոմեքենայի միջոցառման իրականացմանը, ճանապարհների վերականգնմանը և սպասարկմանը, փողոցային լուսավորության էներգարդյունավետության ծրագրի իրականացմանը և այլն:

Երևան քաղաքում «Կանաչ քաղաք գործողությունների ծրագիրը» մինչև 2030 թվականն իրականացվելիք «կանաչ» գործողությունների ամբողջություն է, որը կառուցված է «տեսական-ռազմավարական նպատակներ-միջնաժամկետ թիրախներ» տրամաբանությամբ, որը նպատակ ունի նվազեցնել Երևան քաղաքի շրջակա միջավայրի վրա բազմատեսակ բացասական ազդեցությունների շրջանակը՝ խթանելով Երևան քաղաքի տնտեսական և սոցիալական աճը՝ տրանսպորտի, էներգիայի, թափոնների կառավարման, ջրօգտագործման, հողօգտագործման, օդի որակի բարելավման ոլորտներում: Ծրագրի տարբեր ոլորտներում առկա տնտեսական, բնապահպանական, սոցիալական խնդիրներից բխում են դրանց բացասական հետևանքները կանխելուն միտված ծրագրային գործողությունները և վերջնական արդյունքները: Ծրագրի իրականացումն ընթացիկ փուլում է, սակայն արդեն իսկ կան որոշակի արդյունքներ, մասնավորապես՝ առկա է. նորացված տրանսպորտային ցանց, վերապատրաստված

[1] The official page of United Nations Environment Programme, “Green Economy”, https://www.unep.org/regions/asia-and-pacific/regional-initiatives/supporting-resource-efficiency/green-economy, 25.10.2022

[2] “Green City Action Plan Tbilisi 2017–2030”, September 2017, pages 36-67 , 15.09.2022

համայնքային էներգետիկ կառավարիչներ[1]:

Այնուամենայնիվ, «Կանաչ» քաղաք գործողությունների ծրագրով նախապես պլանավորված «կանաչ» գործողություններից շատերը դեռևս չեն իրականացվել, ինչպես օրինակ՝ «կանաչ» տրանսպորտային միջոցների գնումը և ներդրումը քաղաքային կյանք, նոր քաղաքային աղբավայրի կառուցումը, ինչպես նաև՝ մի շարք աշխատանքներ՝ կապված «կանաչ» ենթակառուցվածքների ներդրման հետ (հեծանվագոտու կառուցում, համայնքային շենքերի կառուցման գործում էներգաարդյունավետ համակարգերի ներդրում և այլն):

Ուստի, Երևանի «կանաչ» քաղաքի կառուցման ուղղությամբ իրականացվող քայլերը պետք է պլանավորել և իրականացնել երկարաժամկետ կայունության և տնտեսական աճի պայմաններում:

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհում լայն թափով զարգանում է «կանաչ» տնտեսությանը և կայուն զարգացմանը միտված քաղաքային կառավարման ձևը, և, չնայած յուրաքանչյուր քաղաքին բնորոշ առանձնահատկություններին, նշված գործընթացի հիմնական նպատակները և դրան հասնելու համար նախանշված միջոցառումներն ունեն ակնհայտ նմանություններ:

«Կանաչ» տնտեսությունը և «կանաչ» աճը կայուն զարգացման համատեքստում.

Առհասարակ, «կանաչ» տնտեսության ռազմավարության իրագործման կարևորությունը կայուն զարգացման համատեքստում արտահայտվում է կայուն զարգացման նպատակների իրագործմամբ: Տեղական մակարդակում այդ նպատակների իրագործումն ի զորու է ապահովել կայուն զարգացում, որում էլ հենց տեսանելի է դառնում կայուն զարգացման և «կանաչ» տնտեսության ռազմավարությունների սերտ կապը:

*Հաշվի առնելով, որ «կանաչ» տնտեսությունը յուրահատուկ ուղի է հանդիսանում կայուն զարգացման ապահովման համար, ապա վերջինիս հետ համադրման չափանիշ են հանդիսանում կայուն զարգացման նպատակները: Մինչ բուն համադրման արդյունքներին անցնելը, **աղյուսակ 2**-ով ներկայացնենք «կանաչ» տնտեսության արդյունքային բնութագրիչները՝ այդ կերպ առավել ակնառու դարձնելով համադրելության նախնական պատկերը:*

[1]Երևանի քաղաքապետարանի ենթակա 320 օբյեկտներում, թվով 3 ՀՈԱԿ-ներում արևային ջրատաքացուցիչներ, 90 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգեր, Հրազդան գետի վրա աղբաորսիչ ճաղավանդակ, Երևանյան լճի առափնյա տարածքների ջրային հատվածի և ափի՝ կենցաղային կոշտ թափոններից մաքրման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ և այլն:

Աղյուսակ 2. «Կանաչ» տնտեսության հիմնական բնութագրիչները:[1]

«Կանաչ» տնտեսության արդյունքային բնութագրիչները և դրանց մեկնաբանությունը
1. Աղքատության հաղթահարման համար առանցքային նշանակություն ունի «Կանաչ» տնտեսությունը:
1.1.«Կանաչ» և նորարարական գյուղատնտեսությունը նպաստում է աղքատության հաղթահարմանը:
1.2.Ավելացնելով ներդրումները բնական ակտիվներում՝ անցումը դեպի «կանաչ» տնտեսություն մեծացնում է ապրուստի միջոցները ցածր եկամուտ ունեցողների համար:
1.3.Աղքատության մակարդակի հաղթահարմանն են նպաստում մաքուր ջրի և սանիտարական ծառայությունների ապահովմանը միտված ներդրումները:
1.4.Վերականգնվող էներգիայի առկայությունը հանգեցնում է էներգետիկ աղքատության հաղթահարմանը:
1.5.Զբոսաշրջության զարգացումը կարող է զարգացնել տեղական տնտեսությունը և խթանել աղքատության նվազեցմանը:
2. «Կանաչ» տնտեսությունը ստեղծում է աշխատատեղեր և բարձրացնում սոցիալական հավասարության մակարդակը:
2.1.Անցումը դեպի «կանաչ» տնտեսություն նշանակում է նաև զբաղվածության սեգմենտի փոփոխություն, քանի որ այն նպաստելու է նոր աշխատատեղերի ստեղծմանը:
2.2.Ընդհանուր առմամբ, «կանաչ» ներդրումների սցենարների ներքո, զբաղվածության աճը կարող է շատ ավելի բարձր լինել:
2.3.«Կանաչ» ներդրումների սցենարներում գյուղատնտեսության, շենքերի, անտառային տնտեսության և տրանսպորտի ոլորտներում աշխատատեղերի աճը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով կգերազանցի սովորական բիզնեսի համեմատելի սցենարները:
2.4.Հատկացումներն էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգիայի օգտագործման ընդլայնման համար կստեղծեն լրացուցիչ աշխատատեղեր:
2.5. Թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում աշխատատեղերը կավելանան՝ բնակչության և եկամուտների աճի հետևանքով առաջացած թափոնների ավելացման հետևանքով:
3. «Կանաչ» տնտեսությունը նպաստում է վերականգնվող էներգիայի օգտագործման ծավալների մեծացմանը և ցածր ածխածնային տեխնոլոգիաների կիրառմանը:

[1]United Nations Environment Programme , “Towards Green Economy, Pathways to Sustainable Development and Poverty Eradication”, 2011, pages 5-26, 29.10.2022

3.1.Վերականգնվող էներգիան ստեղծում է տնտեսական զգալի հնարավորություններ:
3.2.Նորարարական և «կանաչ» տեխնոլոգիաները նպաստում են բնապահպանական խնդիրների լուծմանը:
4. «Կանաչ» տնտեսությունը նպաստում է ռեսուրսների օգտագործմանը և էներգաարդյունավետության բարձրացմանը:
4.1.Արտադրությունը բախվում է բազմաթիվ մարտահրավերների և հնարավորությունների՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման համար, և «կանաչ» տնտեսությունն, այդ առումով, ի զորու է լուծել մի շարք խնդիրներ:
4.2. Համաշխարհային տնտեսությունը դեռևս ունի չօգտագործված հնարավորություններ իրականացնելու արտադրություն՝ ծախսելով ավելի քիչ նյութական և էներգետիկ ռեսուրսներ:
4.3. Տնտեսական աճից և կենսամակարդակի բարձրացումից թափոնների անջատումն առանցքային է դառնում ռեսուրսների օգտագործման արդյունավետության համար:
4.4. Թափոնների վերամշակումը և էներգիայի վերականգնումը դառնում են ավելի շահավետ, քանի որ թափոնները դառնում են առավել արժեքավոր ռեսուրսներ:
4.5. Գյուղատնտեսական և պարենային համակարգերում թափոնների կրճատումը և արդյունավետության բարձրացումը կարող են նպաստել համաշխարհային պարենային անվտանգության ապահովմանը:
5. «Կանաչ» տնտեսությունն ապահովում է ավելի կայուն քաղաքային կյանք և ցածր ածխածնային շարժունակություն:
5.1. «Կանաչ» քաղաքների ստեղծումը բարձրացնում է արդյունավետությունն ու արտադրողականությունը:
5.2. Քաղաքներում կարող են արձանագրվել կայուն ընդլայնում և ներդրումների աճ:
5.3. Շենքային համակարգի կատարելագործումը ևս ներառում է ազդեցության բաղադրիչ:
5.4. Նոր շենքերի կառուցումը, առկա էներգետիկ համակարգերի վերփոխումը կհանգեցնեն խնայողությունների ծավալների զգալի մեծացման:
5.5. Տրանսպորտի ոլորտում էներգաարդյունավետության բարելավումը, մաքուր վառելիքի ընդունումը, ինչպես նաև՝ մասնավորից հանրային ու ոչ շարժիչային տրանսպորտի անցումը կարող են զգալի տնտեսական և առողջապահական օգուտներ բերել:
6. «Կանաչ» տնտեսությունն ավելի արագ է զարգանում, քան՝ «շագանակագույն/ավանդական» տնտեսությունը՝ ժամանակի ընթացքում պահպանելով և վերականգնելով բնական կապիտալը:
6.1. «Կանաչ» տնտեսությունը գրանցում է ավելի արագ աճ՝ միևնույն ժամանակ խուսափելով զգալի բացասական ռիսկերից, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխության հետևանքները, ջրի ավելի մեծ սակավությունը և էկոհամակարգային ծառայությունների կորուստը:

6.2. Տնտեսական հատվածների մեծ մասի փոփոխությունը զգալիորեն կնվազեցնի ջերմոցային գազերի արտանետումները:
6.3. Ռազմավարական քաղաքականության օրակարգը, որն ինտեգրում է մի շարք հիմնական տնտեսական ոլորտների վերափոխումը, նպաստում է սիներգիային և երկարաժամկետ աճին:

Համաձայն ՄԱԿ-ի դասակարգման՝ «կանաչ» տնտեսության ազդեցության գոտիները հարաբերականորեն կարելի է բաժանել 6 հիմնական խմբերի, որոնք հաջորդիվ կվերագրվեն կայուն զարգացման այս կամ այն նպատակին:
*Արդյունքները ներկայացված են **աղյուսակ 3**-ում:*

Աղյուսակ 3. Կայուն զարգացման նպատակների և «կանաչ» տնտեսության հիմնական բնութագրիչների համադրելիության մատրիցա:[1]

	Կայուն զարգացման նպատակը	Կայուն զարգացման նպատակի իրագործման կապը «կանաչ» տնտեսության համապատասխան բնութագրիչի հետ
	Աղքատության վերացում Ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 1, 2, 4.5 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 4.3
	Սովի վերացում Վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության կայուն զարգացումը:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 1, 2, 4.5 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 4.1, 4.3

[1]Մատրիցայի համադրումները կատարվել են հեղինակների կողմից՝ ըստ փորձագիտական՝ որակական գնահատումների

	Ամուր առողջություն և բարեկեցություն Ապահովել առողջ կյանք և խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 3, 5, 6 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.3, 2.4, 2.5, 4
	Որակյալ կրթություն Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ:	**Ուղղակի կապ՝** - **Անուղղակի կապ՝** բնութագիչ 1, 2, 4.3
	Գենդերային հավասարություն Հասնել գենդերային հավասարության և զորացնել բոլոր կանանց ու աղջիկներին:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 2 **Անուղղակի կապ՝** -
	Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ Ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 1.3, 4.5, 6 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 2.3, 2.5, 4, 5
	Մատչելի և մաքուր էներգիա Ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 1.4, 3, 4, 5.4, 6 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 2.4, 5
	Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ Խթանել համապարփակ և կայուն տնտեսական աճ, զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 1, 2 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 4

	Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ Ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 3, 4 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.4, 2.3, 2.4, 2.5, 5
	Անհավասարությունների կրճատում Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 2 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 4.3
	Կայուն քաղաքներ և համայնքներ Քաղաքները դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 5 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.4, 2.3, 2.4, 2.5, 4.4
	Պատասխանատու սպառում և արտադրություն Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 4 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.5, 2.3, 2.5
	Գործողություն հանուն կլիմայի Ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 4, 5, 6 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.4, 2.5

	Կյանքը ջրի տակ Ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրային պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 4, 5, 6 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.4, 2.3, 2.5
	Կյանքը ցամաքում Անտառների կայուն կառավարում, անապատացման դեմ պայքար, հողերի դեգրադացման դադարեցում և շրջադարձում, կենսաբազմազանության կորստի կասեցում:	**Ուղղակի կապ՝** բնութագրիչ 4, 5, 6 **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.4, 2.3, 2.5
	Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ Խթանել արդար, խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը:	**Ուղղակի կապ՝** - **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 2, 4, 5
	Գործընկերություններ հանուն նպատակների Ակտիվացնել գլոբալ գործընկերությունը՝ հանուն կայուն զարգացման:	**Ուղղակի կապ՝** - **Անուղղակի կապ՝** բնութագրիչ 1.5, 2.5, 4, 5, 6.3

Քննարկում

*Սույն հոդվածի **գիտական նորույթն** արտահայտվում է «կանաչ» տնտեսություն և «կանաչ» աճ տերմինների սահմանմամբ, ինչպես նաև՝ «կանաչ» տնտեսության հիմնական բնութագրիչների և կայուն զարգացման նպատակների միջև առկա կապերի հիմնավորմամբ:*

«Կանաչ» աճը միջոց է, ռազմավարություն, որը թույլ է տալիս սահմանել բոլոր այն թիրախները, որոնք ենթադրում են «կանաչ» ներդրումների իրականացում, բնական էկոհամակարգերի պահպանում, ինչպես նաև՝ ռեսուրսների օպտիմալ կառավարում:

Վերլուծության որակական գնահատումների արդյունքներից նկատելի է, որ «կանաչ» տնտեսության պլանավորման և իրագործման ցանկացած գործընթաց ուղղակի և

անուղղակի կերպով կապված է կայուն զարգացման 17 նպատակների՝ հիմնական թիրախային ուղղությունների հետ: «Կանաչ» տնտեսության պլանավորման գործընթացի հիմքում «կանաչ» գնումների, «կանաչ» ներդրումների և «կանաչ» ռազմավարությունների իրականացումն է:

Հոդվածի գիտական նորույթը դրսևորվում է իրականացված որակական գնահատումների արդյունքներում, որոնցում «կանաչ» տնտեսության բոլոր բնութագրիչներն իրենց ամբողջական կամ մասնակի արտացոլումն ունեն կայուն զարգացման այս կամ այն նպատակում, և կայուն զարգացման նպատակները գտնվում են բավականաչափ նկատելի կապի մեջ «կանաչ» տնտեսության բնութագրիչների հետ:

Այսպիսով՝ ***«կանաչ» տնտեսությունը «կանաչ» կառավարման արդյունք է, որը արտահայտվում է տնտեսական, բնապահպանական և սոցիալական երկարաժամկետ կայունության երաշխիքների ապահովման անհրաժեշտությամբ: Այն կառավարման յուրահատուկ շղթա է, որի յուրաքանչյուր փուլի արդյունքները միտված են նվազեցնելու առկա բնապահպանական, տնտեսական և սոցիալական անհավասարությունները:***

«Կանաչ» տնտեսության կարելի է հասնել «կանաչ» աճի միջոցով:

Ասվածից ենթադրվում է, որ «կանաչ» ***աճի քաղաքականությունը տնտեսության կառուցվածքային բարեփոխումների անբաժանելի մասն է կազմում, որի գործունեության մեխանիզմների ներդրումը տարբեր տնտեսական համակարգեր միտված են երկարաժամկետում ավելի ուժեղ, տոկուն, կայուն և ներառական աճ ապահովելուն:***

«Կանաչ» տնտեսության և «կանաչ» աճի կապը դրսևորվում է նաև կառավարման «կանաչ» մեխանիզմների կիրառմամբ «կանաչ» աճի վրա ունեցած ազդեցության շրջանակներով, մասնավորապես՝

- ***արտադրողականության բարձրացում.*** *Խթանների ստեղծում բնական ռեսուրսները առավել արդյունավետ կերպով օգտագործելու համար, էներգիայի և թափոնների սպառման ծավալների նվազեցում, նորարարությունների ստեղծման հնարավորությունների ընձեռում, արդյունավետ արդյունքների ապահովմանը միտված ռեսուրսների բաշխում:*
- ***ներդրողների վստահության բարձրացում.*** *«Կանաչ» տնտեսությունում սահմանափակ ռեսուրսների օպտիմալ կառավարումը ներդրողների մոտ կբարձրացնի վստահության մակարդակը:*
- ***նոր շուկաների ստեղծման հնարավորություններ.*** *«Կանաչ» տնտեսությունը թույլ կտա խթանել «կանաչ» ապրանքների, ծառայությունների և տեխնոլոգիաների արտադրությունը՝ ապահովելով արդյունավետ իրացում,*
- ***հարկաբյուջետային համակարգի արդյունավետ գործունեություն.*** *կենտրոնացնել «կանաչ» հարկերից ստացվող եկամուտները, վերացնել շրջակա միջավայրի համար վնասակար դրամական հատկացումների (սուբսիդիա) իրականացումը:*

Այսպիսով՝ «կանաչ» տնտեսության բնութագրիչները, հանդես գալով որպես կայուն զարգացմանը նպաստող գործոններ և լինելով էական կապերի մեջ կայուն զարգացման նպատակների հետ, տեսանելի են դարձնում կայուն զարգացման գործընթացում երկարաժամկետ և համակարգային գործողությունների շղթայի մի մասը լինելու հանգամանքը:

Ուստի, դրանց կիրառման հնարավորությունների շրջանակում տնտեսության բաղադրիչները կարելի է համարել «կանաչ», եթե դրանք՝ուղղակի կամ անուղղակի կեր-

պով կապվում են կայուն զարգացման նպատակների հետ և հանդիսանում են այնպիսի համակարգի մի մաս, որը հիմնվում է կայուն զարգացման ապահովման վրա՝ երկարաժամկետ արդյունքների ստեղծման ու պահպանման միջոցով:

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով «կանաչ» տնտեսության էության, դրա սկզբունքների և ներազդեցության ուղղությունների ուսումնասիրությունը, հաշվի առնելով համաշխարհային տնտեսության, մասնավորապես՝ քաղաքային տնտեսությունների կենսագործունեության արդի միտումներն ու հիմնախնդիրները, ինչպես՝ բնապահպանական, այնպես էլ սոցիալական ու առողջապահական ոլորտների զարգացման համատեքստում, կարող ենք արձանագրել, որ նորօրյա մարտահրավերները մղում են այնպիսի քաղաքականության մշակման, որով տնտեսությունների կառավարումն ու կենսագործունեության բոլոր ուղղություններն անհրաժեշտ է ներդաշնակեցնել «կանաչ»-ի սկզբունքներին, ինչը երկարաժամկետ հեռանկարում թույլ կտա ապահովել առանձին տարածքային միավորների, պետությունների և ողջ երկիր մոլորակի կայուն ու բնականոն զարգացումը:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ «կանաչ» տնտեսություն հասկացությունը չի փոխարինում կայուն զարգացմանը: Այն առանձնակի ուշադրություն է դարձնում տնտեսության, ներդրումների, կապիտալի, ենթակառուցվածքների, զբաղվածության, հմտությունների, սոցիալական և բնապահպանական դրական արդյունքների վրա[1], որով և ստեղծվում են կայուն զարգացման նպատակների իրագործման հնարավորություններ: Միևնույն ժամանակ, «կանաչ» տնտեսության բնութագրիչները, որոնք սերտորեն կապվում են կայուն զարգացման նպատակների հետ, առավելապես են ընդգծում տնտեսության երկարաժամկետ պլանավորման և կայունության երաշխիքի միջոց հանդիսանալու կարևորության մասին:

Հետազոտության արդյունքներն արտահայտում են «կանաչ» տնտեսության և «կանաչ» աճի՝ որպես կառավարման ընդհանուր համակարգի միասնականությունը, «կանաչ» տնտեսության բնութագրիչների և կայուն զարգացման նպատակների համադրելիությունը, որը միտված է առավել ընդգծելու դրանց փոխհամագործակցության առաջիկա հնարավորությունների կարևորությունը և կայուն զարգացման գործում դրա՝ որպես յուրահատուկ երաշխավորի դերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ, «Քաղաքային զարգացում», թարմացված 20 ապրիլ, 2020, https://www.worldbank.org/en/topic/urbandevelopment/overview
2. “A Guidebook for the Green Economy”, Allen, C.; Clouth, S. , UN Division for Sustainable Development (UNDESA): New York, NY, USA, 2012
3. “Annual Report 2011: United Nations Environmental Programme”, RIO+ 2012; UNEP Division of Communications and Public Information: Nairobi, Kenya, 2011

[1]“Green Economy”, The official page of United Nations Environment Programme, https://www.unep.org/regions/asia-and-pacific/regional-initiatives/supporting-resource-efficiency/green-economy, 30.10.2022

4. “Blueprint for A Green Economy”, Pearce, D.; Markandya, A.; Barbier, E. Routledge: London, UK, 1989, https://www.taylorfrancis.com/books/mono/10.4324/9781315070223/blueprint-1-edward-barbier-david-pearce-anil-markandya
5. “Environmental Indicator Report 2012: Ecosystem Resilience and Resource Efficiency in A Green Economy in Europe”, EEA. Publications Office of the European Union: Luxembourg, 2012.
6. “From a green growth to sound policies: An overview. Energy Econ”, Schmalensee R., 2012, https://www.sciencedirect.com/science/article/pii/S0140988312002113?via%3Dihub
7. “Green City Action Plan Tbilisi 2017–2030”, September 2017, pages 36-67
8. The official page of United Nations Environment Programme, “Green Economy”, https://www.unep.org/regions/asia-and-pacific/regional-initiatives/supporting-resource-efficiency/green-economy
9. “Towards A Green Economy: Pathways to Sustainable Development and Poverty Eradication—A Synthesis for Policy Makers”, UNEP Division of Communications and Public Information: Nairobi, Kenya, 2011
10. United Nations Environment Programme, “Towards Green Economy, Pathways to Sustainable Development and Poverty Eradication”, 2011, pages 5-26

REFERENCES

1. Hamashxarhayin banki pashtonakan kayqe'j, “Qaghaqayin zargacum”, t'armacvac' 20 april, [Official website of the World Bank, "Urban Development", updated April 20] 2020
2. “A Guidebook for the Green Economy”, Allen, C.; Clouth, S. , UN Division for Sustainable Development (UNDESA): New York, NY, USA, 2012
3. “Annual Report 2011: United Nations Environmental Programme”, RIO+ 2012; UNEP Division of Communications and Public Information: Nairobi, Kenya, 2011
4. “Blueprint for A Green Economy”, Pearce, D.; Markandya, A.; Barbier, E. Routledge: London, UK, 1989, https://www.taylorfrancis.com/books/mono/10.4324/9781315070223/blueprint-1-edward-barbier-david-pearce-anil-markandya
5. “Environmental Indicator Report 2012: Ecosystem Resilience and Resource Efficiency in A Green Economy in Europe”, EEA. Publications Office of the European Union: Luxembourg, 2012.
6. “From a green growth to sound policies: An overview. Energy Econ”, Schmalensee R., 2012, https://www.sciencedirect.com/science/article/pii/S0140988312002113?via%3Dihub
7. “Green City Action Plan Tbilisi 2017–2030”, September 2017, pages 36-67
8. The official page of United Nations Environment Programme, “Green Economy”, https://www.unep.org/regions/asia-and-pacific/regional-initiatives/supporting-resource-efficiency/green-economy
9. “Towards A Green Economy: Pathways to Sustainable Development and Poverty Eradication—A Synthesis for Policy Makers”, UNEP Division of Communications and Public Information: Nairobi, Kenya, 2011

10. United Nations Environment Programme, “Towards Green Economy, Pathways to Sustainable Development and Poverty Eradication”, 2011, pages 5-2.

РЕЗЮМЕ
“ЗЕЛЕНАЯ” ЭКОНОМИКА КАК ГАРАНТ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

Татосян Кристине
АГЭУ, кафедра управления, аспирант;
Служба государственного надзора РА, эксперт;
Ереванский региональный государственный колледж N 2 имени Н. Аджемяна государственная некоммерческая организация (ГНКО), преподаватель
Ереван, Республика Армения

Бададян Гагик
АГЭУ, кафедра управления, ассистент, аспирант;
Министерство высокотехнологичной промышленности РА, эксперт
Ереван, Республика Армения

Шагинян Мгер
Аспирант кафедры делового (бизнес) администрирования АГЭУ
Департамент Министерства экономики,
Отдел промышленного развития Департамента промышленной политики,
Главный специалист, ИО руководителя
Ереван, Республика Армения

Деятельность **“**зеленой**”** экономики направлена на снижение выбросов углерода и загрязнений в хозяйстве, повышение эффективности использования энергии и ресурсов, предотвращение потерь биоразнообразия и экосистем.

Актуальность темы обусловлена важностью роли городов в процессе планирования **“**зеленой**“** экономики, и по прогнозам, уже в 2050 году 70% населения мира будет проживать в городах. Естественно, что при таких прогнозах первоочередной задачей повестки дня становится логичное направление пакета концептуальных изменений городских экономик на внедрение **“**зеленой**”** политики, а затем четкое определение и реализация шагов, направленных на ее эффективное внедрение в практическую сферу. Целью исследования является оценка взаимосвязи между целями устойчивого развития и характеристиками “зеленой” экономики по их полному или частичному отражению в целях устойчивого развития.

Задачи исследования: дать определения относительно “зеленой” экономики и подчеркнуть их особенности и принципы, изучить примеры зарубежного опыта в рамках реализации “зеленой” экономики, выявить степень сопоставимости характеристик и цели устойчивого развития “зеленой” экономики.

В статье использованы методы сочетания, индукции, других равных условий, исторический и логический.

Согласно научной новизне исследования- характеристики, вытекающие из принципов “зеленой” экономики, напрямую сопоставимы с целями устойчивого развития, что очерчивает особый механизм долгосрочного экономического планирования.

В итоге, результаты матричного совмещения позволяют более наглядно представить важность их взаимодействия в процессах разработки и внедрения “зеленого” планирования и “зеленых” процедур экономики, применения их в процессах развития отраслевых стратегий.

Ключевые слова: “зеленая” экономика, устойчивое развитие, матричное сочетание, международный опыт.

SUMMARY
"GREEN" ECONOMY AS A GUARANTEE OF SUSTAINABLE DEVELOPMENT

Tatosyan Kristine
ASUE, Chair of Management, Ph.D. Student;
RA State Supervision Service-expert
Yerevan Regional State College No. 2 named after N. Achemyan - lecturer
Yerevan, Armenia

Badadyan Gagik
ASUE, Chair of Management, Assistant and Ph.D. Student;
RA Ministry of High-tech Industry - expert
Yerevan, Armenia

Shahinyan Mher
ASUE, Chair of Management, Ph.D. Student;
Department of the RA Ministry of Economy,
Industrial Development Division of the Industrial Policy,
Chief Specialist- Acting Head
Yerevan, Armenia

The activity of the "green" economy is aimed at reducing carbon emissions and pollution in the economy, increasing the efficiency of energy and resource use, and preventing the loss of biodiversity and ecosystems. ***The modernity*** of the topic is due to the importance of the role of cities in the planning process of the green economy, and according to forecasts, already in 2050, 70% of the world's population will live in urban areas. It is natural that in the case of such a forecast, the primary task of the agenda becomes the logical direction of the package of conceptual changes of urban economies to the introduction of the "Green" policy and then, the clear outline and implementation of the steps aimed at its effective implementation in the practical domain.

The purpose of the research is to evaluate the relationship between sustainable development goals and green economy characteristics according to their full or partial reflection in sustainable development goals**.** ***The tasks*** of the research are to give definitions of the green economy and emphasize their special characteristics and principles, to study examples of international experience within the framework of the implementation of the green economy, to reveal the degree of interaction between the characteristics of the green economy and the goals of sustainable development.

The article uses the ***methods*** of combination, induction, other equal conditions (Ceteris Paribus), historical and logical.

According to the scientific novelty of the research, the characteristics derived from the principles of the green economy are directly correlated with the goals of sustainable development, which outlines a special mechanism for long-term economic planning. ***As a result,*** the outcomes of the matrix comparison will allow to more vividly visualize the importance of their interaction in the processes of development and implementation of green planning and green procedures of the economy, ***applying*** them in the processes of development of sectoral strategies.

Key words: green economy, sustainable development, matrix combination, international experience.